ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ

С. Х. МНАЦАКАНЯН, К. Л. ОГАНЕСЯН, А. А. САИНЯН, *Очерки по истории архитектуры древней и средневековой Армении*, изд-во АН Арм. ССР, Ереван, 1978, 159 стр.

Հայկական ճարտարապետության պատմության և տեսության հարցերին նվիրված վերջին տարիների հրատարակությունների մեջ ուշագրավ է նորերս լույս ընծայված վերոհիշյալ աշխատությունը, որն ըստ էության հայկական ճարտարապետության զարգացման ընթացքի հաջորդական և սիստեմատիկ քննությունն է՝ վաղնջական ժամանակներից մինչև XVIII դ. վերջը։

Գրքում լայն շրջանառության մեջ է դրված Հայկական լեռնաշխարհում մինչուրարտական ժամանակաշրջանի մարդու մշակութային-շինարարական գործունեությունը։ Զգալիորեն ընդլայնված է մեգալիթյան կառուցվածքների տեղադրական անվանացանկը, բացահայտված և խորացված են ուրարտական քաղաքաշինության, ամրաշինության մի շարք սկզբունքներ, պալատական համակառույցների և կացարանի տիպերի հորինվածքային շատ գծեր։

Ստրկատիրական ժամանակաշրջանի Հայաստանի մի շարք քաղաքների և ամրոցների (Արմավիր, Արտաշատ, Գառնի և այլն) վերջերս կատարված պեղումների արդյունքները, նրանցում հայտնաբերված հուշային և պաշտամունքային կառույցների հորինվածքների համագրական վերլուծությունը թույլ են տվել հավաստելու այդ շրջանում քաղաքաշինության և ճարտարապետական արվեստի զարգացման բարձր մակարդակը, դրանում տեսնելու հետագա դարաշրջանների ճարտարապետության և շինարվեստի զարգացման ակունքները։

Միջնադարյան Հայաստանի պատմա-ճարտարապետական զգալի թվով հանգուցային հուշարձաններ (Զովունիի երկհարկ դամբարան և գմբեթավոր դահլիճ, Տաշիրի միանավ բազիլիկներ, Արզնիի, Զարնջայի, Բյուրականի եկեղեցիներ և այլն), որոնք մինչև այժմ հայտնի էին գլխավորապես ամսագրային հոդվածներից, տեղ գտնելով աշխատության մեջ հնարավորություն են ստացել լայնորեն ներգրավվելու գիտական շրջանառության մեջ։

Նյութի հավաստիությանը զգալիորեն նպաստել է այն, որ բոլոր հեղինակներն էլ քննվող հուշարձանների գերակշիռ մասի անձամբ ուսումնասիրողներն են (այդ թվում՝ պեղումների ղեկավար, վերակազմությունների հեղինակ և դրանց զգալի մասի իրականացնող)։ Նրանք առաջնորդվել են մեթոդաբանական ուսանելի և արդյունավետ սկզբունքով։ Գրախոսվող աշխատության մեջ հայկական ճարտարապետության զարգացման ընթացքի շարադրանքը հաճախակի զուգակցվում է հայ ճարտարապետության պատմության և տեսության համար կարևոր և հրատապ մի շարք խնդիրների (կենտրոնական և երկայնական հորինվածքների սինթեզ, շինարարական տեխնիկա և քարե կոնստրուկցիաներ, որմնանկարչական արվեստ և պատկերաքանդակներ և այլն) արծարծմամբ։ Անհրաժեշտ խորությամբ քննվում են գմբեթային փոխանցումներին, գմբեթային սիստեմից եկող հորիզոնական ճիգերի չեզոքացմանը, միջնադարյան կառուցողական հիմունքներին, շինարարական աշխատանքների կազմակերպման դրվածքին, հուշարձանների համաչափություններին վերաբերող և այլ առանցքային հարցեր։

Կարևոր տեղ է հատկացված հայկական ճարտարապետության ծագումնաբանության և ժառանգորդության հարցերին, որով զգալիորեն հստակեցված են հայ ժողովրդի մշակութային կապերի և առնչակցությունների պատկերը, հայկական ճարտարապետության զարգացման ակունքները։

Դեռևս իր սկզբնավորման շրջանում հայկական ճարտարապետությունը ի հայտ է բերում հորինվածքային գծեր, որոնց արմատները տանում են դեպի Հին Արևելքի երկրներ՝ մասնավորապես Ուրարտու։ Այդպիսի ծագումնաբանական կապ, որ բացահայտում է Կ. Հովհաննիսյանը, գոյություն ունի ուրարտական մեգարոնի և հայկական ժողովրդական բնակելի տան, ուրարտական տաճարների (Էրեբունի, Մենուախինիլի) և հին Հայաստանի առաջին բազիլիկ կառուցվածքների հորինվածքներում, ուրարտական ամրոցների (Էրեբունի, Թեյշեբաինի) և հին հայկական քաղաքների (Արմավիր, Դվին, Անի և այլն) պաշտպանական համակարգերում,

ուրարտական անձավային հուշարձանների (Վան) և միջնադարյան վիմափոր կառուցվածքների (Անի, Դեղարդ, Սյունիք) հորինվածքներում և այլն (էջ 17, 20, 28, 32)։

Հայաստանը, ինչպես և Հին Արևելքի մի շարք երկրներ մ. թ. ա. II—I դդ. գտնվել են հելլենիստական մշակույթի ազդեցության ոլորտում։ Սակայն, ինչպես մատնանշում է Ա. Սահինյանը, «Հայաստանում հելլենիստական մշակույթը մնաց գերազանցապես ստրկատիրական վերնախավի և քաղաքային բնակչության մշակույթ։ Ժողովուրդը շարունակեց զարգացնել իր տեղական ավանդույթները, այդ թվում և ճարտարապետության բնագավառում» (էջ 33)։

Միջնադարյան Հայաստանը գտնվելով առևտրա-տնտեսական, մշակութային և դավանաբանական կապի մեջ հարևան երկրների (Սիրիա, Փոքր Ասիա, Վրաստան և այլն) հետ, նրա ճարտարապետությունն էլ զարգացել է այդ երկրների հետ առնչակցության և փոխազդեցության պայմաններում։ Եվ պատահական չէ, որ հատկապես հայկական վաղ միջնադարյան ճարտարապետության առանձին ձևերի և հնարանքների մեջ նկատելի են որոշ ընդհանրություններ հարևան երկրների ճարտարապետության հետ։ Դրանով հանդերձ, հայկական ճարտարապետության զարգացումը, ինչպես իրավացիորեն նկատում են աշխատության հեղինակները, ընթացել է սեփական ճանապարհով՝ զարգացման իր ներքին օրինաչափությունների, ազգային կառուցողական ավանդույթների, յուրահատուկ հորինվածքային լուծումների. հարուստ արտահայտչամիջոցների և այլնի հիման վրա։

«Ակնարկներում» բացահայտված է, որ հայկական միջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ձևագոյացման ակունքները տանում են դեպի ժողովրդական բնակելի տան՝ գլխատան հորինվածքը՝ արտաքին պատերի կամ ազատ կանգնած սյուների վրա հենվող հազարաշեն ծածկերով։ Վերջիններս՝ վերաիմաստավորված քարե կոնստրուկցիաներում, նոր հնչեղությամբ հանդես են գալիս մի կողմից վաղ միջնադարյան պալատական շենքերի (Դվին, Զվարթնոց, Արուճ) սյունազարդ դահլիճների, մյուս կողմից՝ զարգացած միջնադարի, հատկապես XII—XIV դդ. կիսապաշտամունքային և քաղաքացիական շենքերի՝ գավիթ-ժամատների, սեղանատների, գրատների և այլ հորինվածքներում։ Ավելին, ինչպես նկատում է Ս. Մնացականյանը, ժողովրդական կացարանի վերը նշված տիպերը ուղղակիորեն արտահայտվել են Տեկորի և V—VII դդ. կենտրոնագմբեթ եկեղեցիների (Ոզջաբերդ, էջմիածնի տաճար, Ծովիզ և այլն) հորինվածքներում (էջ 90)։ Համեմատական նյութի հիման վրա ցույց է տրվում, որ ժառանգորդության ավանդումը այս կամ այն չափով դրսևորվում է նաև քաղաքաշինական սկզբունքներում, կառուցողական հնարքներում և գեղարվեստական հարդարանքում։

«Ակնարկների» կարևոր արծարծումներից են նաև Հայկական լեռնաշխարհում մշակութային գործունեության սկզբնավորման ժամանակի ճշգրտումը, հայկական ճարտարապետության կազմավորման շրջանի խորացված բնութագրումը, աշխարհիկ ճարտարապետության խնդիրների լայն ընդգրկումը, հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրման և գնահատման ընթացքի հետևողական բացահայտումը և այլն։

Աշխատությունը ավելի կշահեր, եթե հայկական ճարտարապետության զարգացման շրջանները (որոնք բաշխված են ըստ գլուխների) ճշտորեն համապատասխանեին հայ ժողովրդի պատմության ժամանակագրական բաժանումներին։ Նրանում վաղ միջնադարյան շրջանը բաժանված է երկու մասի, ամփոփվելով «IV դ.—VI դ. առաջին կեսի վերջի ճարտարապետությունը» և «VI դ. երկրորդ կեսից—VII դ. վերջի ճարտարապետությունը» առանձին գլուխներում։ Բաժանման ժամանակագրական սահման, ինչպես նշվում է աշխատության մեջ (էջ 86), հանդիսացել է Դվինի երկրորդ ժողովի գումարման տարին՝ 554 թ.։

Ի՞նչ փաստեր է տալիս հայկական ճարտարապետության պատմությունը 554 թ. հետո ճարտարապետության զարգացումը նոր շրջան թևակոխելու վերաբերյալ։ Դիմենք հենց «Ակնարկներին»։ «IV դ.—VI դ. առաջին կեսի վերջի ճարտարապետությունը» (554 թ. առաջ) և «VI դ. երկրորդ կեսից—VII դ. վերջի ճարտարապետությունը» (554 թ. հետո) գլուխներում տեղադրված հուշարձաններից ոչ մեկի (բացի Ավանից) թվագրման վերաբերյալ հավաստի տվյալներ (վիմագրական, մատենագրական և այլն) հայտնի չեն։ Դրանց մի մասը (Օձունի եկեղեցի և կոթող, Ծիծեռնակավանք, Արզնի, Արթիկ և այլն), ինչպես և բերված թվագրումներն են հնարավորություն տալիս, կարող են նույն հաջողությամբ դրվել 554 թ. և՛ առաջ, և՛ հետո (հիմնականում այդ ձևով էլ ներկայացվում են ուսումնասիրություններում)։ Ուստի բերված հուշարձանների օրինակով դժվար է ասել (աշխատության մեջ չի էլ ասվում), թե ինչո՞ւմն են կայանում 554 թ. առաջ և հետո կառուցված հուշարձանների դավանաբանական ազդեցությամբ պայմանավորված հորինվածքային տարբերությունները։ Նաև հիմնավոր չի լինի

նման բաժանման համար տարբերակման հատկանիշներ փնտրել նրանց ճարտարապետական-գեղարվեստական և կոնստրուկտիվ տվյալների հիման վրա։

Մյուս կողմից, հայ ժողովրդի հակաքաղկեդոնական կողմնորոշումը, սկսվելով 554 թ. դեռևս շատ վաղ, ունեցել է տևական ընթացք (ավելի քան 50 տարի), որն «իր վերջնական ձևավորումն ստացավ 506 թվականի Դվինի առաջին և 554 թվականի երկրորդ ժողովներում»[1]։

Շարադրվածը հիմք է տալիս կարծելու, որ հայկական ճարտարապետության զարգացման վաղ միջնադարյան շրջանը (IV—VII դդ.) նշված ձևով բաժանելը՝ որոշակիորեն դրսևորվող ահմանային կովաններ չլինելու պատճառով, բավականաչափ հիմնավորված չէ։

Տարակուսելի է, որ նույն գլխում է ներկայացված սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի զարգացման միանգամայն տարբեր պայմաններ ունեցող XII—XVIII դդ. ընդգրկող ժամանակաշրջանի ճարտարապետությունը, որն աչքի է ընկնում վերելքների և վայրէջքների ելևէջումներով ու ոճական ակնհայտ տարբերություններով։

Հայկական ճարտարապետության անցած ուղու պատկերը առավել ամբողջական կլիներ, եթե աշխատության մեջ տեղ գտնեին նաև հայկական գաղթօջախների (Ղրիմ, Հյուսիսային Կովկաս, Լվով, Ռումինիա և այլն) հայկական հուշարձանները, XIX դ.—XX դ. սկզբի և սովետական շրջանի ճարտարապետությունը։

Վանքային համալիրների քննությունը թողնելով միայն «XII—XVIII դդ. ճարտարապետությունը» գլխին, «IX—XI դդ. ճարտարապետությունը» գլխում քննվում է Տաթևի վանքային համալիրի միայն գլխավոր եկեղեցին, հաջորդ դարաշրջանին թողնելով մյուս հուշարձանները՝ այդ թվում ճոճվող սյունակոթողը (X դ.), Աստվածածին եկեղեցին (XI դ.), որոնք ժամանակի առումով սերտ կապի մեջ լինելով գլխավոր եկեղեցու հետ, նաև վանքային համալիրի կարևոր հուշարձաններից են։ Այդ մասնատումով պետք է բացատրել, որ երկու գլխի մեջ էլ այս կամ այն չափով խոսվում է գլխավոր եկեղեցու և վանքային համալիրի հետ կապված հարցերի մասին (էջ 120, 121 և 141)։

XII—XVIII դդ. ճարտարապետությունն ընդգրկող գլխում է ներկայացված Սանահինի վանքային համալիրը, որի կարևոր հուշարձանների մեծ մասը (այդ թվում՝ գլխավոր եկեղեցին) կառուցվել է X—XI դդ.։

Աշխատության մեջ տեղ են գտել որոշ անհստակություններ և կրկնություններ։ Հաղբատի ս. Նշան եկեղեցու կառուցման ժամանակը 125-րդ էջում նշվում է 967—991 թթ., իսկ 144-րդ էջում՝ 972—991 թթ., Սանահինի Ամենափրկիչինը՝ 125-րդ էջում՝ 957—962 թթ., իսկ 142-րդ էջում՝ 966 թ. (բերված է միայն ավարտման տարին)։ Պտղնիի կառուցման ժամանակը 78-րդ էջում համարվում է VI դ. և VI դ. երկրորդ կեսը, իսկ 109-րդ էջում նրա հիմնադրման ժամանակը ենթադրվում է 602 թ.։ Անիից ոչ հեռու, Ներքին Ջրափի գյուղի մոտ՝ Ախուրյան գետի վրա կառուցված կամրջի մասին խոսվում է և՛ 130-րդ, և՛ 137-րդ էջերում՝ մի դեպքում Ջրափի, մյուս դեպքում Զրփլի անվանումներով, կամարի թռիչքը՝ մի դեպքում նշվում է 30 մ-ից ավելի, մյուս դեպքում՝ 30 մ։ 79-րդ էջում բերված է Օձունի զմբեթավոր բազիլիկի (75-րդ էջում ժամանակագրված է VI դ., 107-րդ էջում՝ VI դ. կես) հատակաձևը, որտեղ արտաքին սրահի հյուսիսային թևի արևմտյան խուլ պատը ցույց է տրված հարավային թևի հանդիպակաց պատին հավասար, իսկ կամարաշարի բացվածքների քանակը ընդունված է յոթ, որոնք չեն բխում հուշարձանի փաստական տվյալներից (հյուսիսային թևի խուլ պատի նախնական երկարություն, արևմտյան թևի ճակատային պատի միայն հյուսիսային կողմում պատուհանի առկայություն և այլն)։

Այս ամենով հանդերձ, «Ակնարկներ» աշխատությունը դասվում է հայկական ճարտարապետության զարգացման ընթացքը լուսաբանող լավագույն աշխատությունների շարքը և հանդիսանում է ուղեցույց ձեռնարկ հայկական ճարտարապետության պատմության և տեսության խնդիրներով զբաղվողների համար։

ԴԱՌՆԻԿ ՇԱՀԵԿՅԱՆ
Ճարտարապետության թեկնածու

---

1 «Հայ ժողովրդի պատմություն» (սկզբից մինչև XVIII դ. վերջը), Երևան, 1975, էջ 302, 304։